Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունիսի 25-ի N 921 - Ն որոշման

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ (ՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՌՆԱԼՈՒ) ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Սույն հավելվածով կարգավորվում են վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) կողմից մաքսային միասնական հաշվին դրամական միջոցների մուտքագրման վերաբերյալ մաքսային մարմիններին տեղեկությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Համակարգի միջոցով կազմակերպությունների կողմից մաքսային մարմին է տրամադրվում մաքսային միասնական հաշվին դրամական միջոցների մուտքագրման փաստն արտացոլող՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 14-ի N 168-Ն որոշմանը համապատասխան ձևավորված վճարային փաստաթուղթը (այսուհետ՝ անդորրագիր) կամ այդպիսի փաստաթղթերի վերաբերյալ համակարգերի փոխազդեցության արդյունքում նույնականացված տեղեկությունները:

3. Անդորրագիրը կամ անդորրագրի վերաբերյալ համակարգերի փոխազդեցության արդյունքում նույնականացված տեղեկությունները պետք է պարունակեն առնվազն հետևյալ տվյալները՝

1) անդորրագրի համարը.

2) վճարման գործառնության իրականացման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը) և ժամը (ժամը, րոպեն, վայրկյանը).

3) կազմակերպության անվանումը.

4) մաքսային պարտավորությունները վճարողի (հայտարարատուի) անվանումը կամ անունը, ազգանունը.

5) Հայաստանի Հանրապետության քաղաքացու դեպքում՝ հանրային ծառայության համարանիշը (ՀԾՀ) կամ դրա բացակայության դեպքում՝ լիազորված մարմնի կողմից տրամադրված հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ տեղեկանքի համարը, օտարերկրյա քաղաքացու դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի համարը, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

6) վճարված գումարը.

7) այլ նշումներ՝ առկայության դեպքում:

4. Սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված անդորրագիրը կամ համակարգերի փոխազդեցության արդյունքում նույնականացված տեղեկությունները կազմակերպությունների կողմից տրամադրվում են ավտոմատացված եղանակով համակարգին՝ գործառնության իրականացումից հետո անմիջապես (իրական ժամանակում):

5. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի միջոցով՝ օրական կտրվածքով, պետական գանձապետական համապատասխան հաշիվներին կատարված մուտքերի վերաբերյալ տեղեկությունների՝ մաքսային մարմնին հասանելի դառնալուց հետո, մաքսային մարմիններն իրականացնում են այդ տեղեկությունների, սույն կարգի 4-րդ կետով ստացված տեղեկությունների և մաքսային փաստաթղթերի հիման վրա մարված մաքսային պարտավորությունների համադրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ